ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ

ՄԻՋԵՎ՝

ՄԱՔՍԱՅԻՆ ՀԱՐՑԵՐՈՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ՓՈԽԱԴԱՐՁ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը և Հնդկաստանի Հանրապետության կառավարությունը (այսուհետ՝ Պայմանավորվող կողմ՝ առանձին, Պայմանավորվող կողմեր՝ միասին),

հաշվի առնելով, որ մաքսային օրենսդրության խախտումները վնաս են հասցնում երկու երկրների տնտեսական, առևտրային, ֆինանսական, սոցիալական, առողջապահական, բնապահպանական և մշակութային շահերին,

գիտակցելով ապրանքների ներմուծման/արտահանման համար մաքսատուրքերի, հարկերի և ցանկացած այլ գանձման ու վճարի ճշգրիտ հաշվարկումն ու հավաքագրումը, ինչպես նաև արգելքներին, սահմանափակումներին և առևտրային քաղաքականության հետ կապված այլ միջոցառումներին առնչվող մաքսային օրենսդրության պատշաճ իրականացումն ապահովելու կարևորությունը,

մտահոգված լինելով թմրամիջոցների և հոգեմետ նյութերի ապօրինի շրջանառության նոր միտումներով, ինչպես նաև հաշվի առնելով, որ դրանք վտանգավոր են բնակչության առողջության և հասարակության համար,

համոզված լինելով, որ մաքսային իրավախախտումների առնչությամբ իրականացվող հարկադիր գործողությունները կարող են ավելի արդյունավետ դառնալ իրենց մաքսային ծառայությունների միջև սերտ համագործակցության միջոցով,

ցանկանալով խթանել ծախսերի նվազեցմանն ու երկու երկրների միջև օրինական առևտրի դյուրացմանն ուղղված՝ ժամանակակից, արդյունավետ և թափանցիկ ընթացակարգեր,

իմանալով կարողությունների զարգացման կարևորության և իրենց վերապատրաստումների ծրագրերը գիտականորեն մշակելու անհրաժեշտության մասին,

գիտակցելով Պայմանավորվող կողմերի մաքսային օրենսդրությունների կիրառման և կատարման հետ կապված հարցերի շուրջ միջազգային համագործակցություն հաստատելու անհրաժեշտությունը և

հաշվի առնելով փոխադարձ օգնությունը խրախուսող համապատասխան միջազգային կոնվենցիաները, ինչպես նաև Համաշխարհային մաքսային կազմակերպության առաջարկությունները,

համաձայնեցին հետևյալի մասին.

ԳԼՈՒԽ I

Հոդված 1

Սահմանումները

Սույն Համաձայնագրի նպատակներով ստորև ներկայացված եզրույթներն ունեն հետևյալ նշանակությունը.

ա) «Մաքսային ծառայություն»՝ Հայաստանի Հանրապետության համար՝ Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտե, Հնդկաստանի Հանրապետության համար՝ Անուղղակի հարկերի և մաքսատուրքերի կենտրոնական խորհուրդ.

բ) «մաքսատուրքեր»՝ բոլոր այն տուրքերը, հարկերը, գանձումները կամ բոլոր այլ վճարները, որոնք մաքսային օրենսդրության կիրառմամբ գանձվում են

Պայմանավորվող կողմերի տարածքում կամ կապված են ապրանքների ներմուծման կամ արտահանման հետ՝ չներառելով, սակայն, մատուցվող ծառայությունների համար նախատեսված վճարներն ու գանձումները.

գ) «մաքսային օրենսդրություն»՝ մաքսային ծառայության կողմից կիրառվող կամ կատարվող ցանկացած իրավական, նորմատիվ և վարչական դրույթ՝ կապված ապրանքների ներմուծման, արտահանման, փոխաբեռնման, տարանցման, պահեստավորման և տեղաշարժի հետ, ներառյալ արգելքներին, սահմանափակումներին և վերահսկողության միջոցներին վերաբերող իրավական և վարչական դրույթները.

դ) «մաքսային իրավախախտում»՝ Պայմանավորվող կողմերի մաքսային օրենսդրության ցանկացած խախտում կամ խախտման փորձ.

ե) «տեղեկություններ»՝ մշակված, չմշակված կամ վերլուծության ենթարկված ցանկացած տվյալ, ինչպես նաև փաստաթուղթ, հաշվետվություն և ցանկացած այլ ձևաչափի հաղորդակցություն, այդ թվում՝ էլեկտրոնային, կամ դրանց վավերացված կամ հաստատված պատճեններ.

զ) «թմրամիջոց»՝ «Թմրամիջոցների մասին» 1961 թվականի միասնական կոնվենցիայի (համապատասխան փոփոխություններով) I և II ցանկերում թվարկված՝ բնական կամ սինթետիկ ծագման ցանկացած նյութ.

է) «անձ»՝ ինչպես ֆիզիկական, այնպես էլ իրավաբանական անձ, եթե համատեքստով այլ բան չի պահանջվում.

ը) «անձնական տվյալներ»՝ նույնականացված կամ նույնականացման ենթակա ֆիզիկական անձին վերաբերող ցանկացած տվյալ.

թ) «քիմիական պրեկուրսոր»՝ վերահսկողության ենթարկվող ցանկացած քիմիական նյութ, որն օգտագործվում է «Թմրամիջոցների և հոգեմետ նյութերի ապօրինի շրջանառության դեմ պայքարի մասին» ՄԱԿ-ի 1988 թվականի կոնվենցիայի I և II հավելվածներում թվարկված թմրամիջոցների և հոգեմետ

նյութերի պատրաստման ընթացքում.

ժ) «հոգեմետ նյութ»՝ «Հոգեմետ նյութերի մասին» ՄԱԿ-ի 1971 թվականի կոնվենցիայի I, II, III և IV ցանկերում թվարկված՝ բնական կամ սինթետիկ ծագման ցանկացած նյութ.

ժա) «Հայցող մաքսային ծառայություն»՝ մաքսային ծառայություն, որն օգնության մասին հարցում է անում, և

ժբ) «Հայցվող մաքսային ծառայություն»՝ մաքսային ծառայություն, որին օգնության մասին հարցում է արվում:

ԳԼՈՒԽ II

Հոդված 2

Համաձայնագրի գործողության ոլորտը

1. Պայմանավորվող կողմերի մաքսային ծառայությունները համաձայնում են ամրապնդել, խթանել և զարգացնել համագործակցությունը և փոխադարձ օգնությունը երկու կողմերի միջև մաքսային հարաբերություններին վերաբերող հարցերի շուրջ, ինչպես նաև ամրապնդել փոխըմբռնումը և հաղորդակցությունը:

2. Պայմանավորվող կողմերը, իրենց մաքսային ծառայությունների միջոցով և սույն Համաձայնագրի դրույթներին համապատասխան, միմյանց տրամադրում են օգնություն՝

ա) մաքսային օրենսդրության պատշաճ կիրառման նպատակով մաքսային իրավախախտումները կանխելու, քննելու և դրանց դեմ պայքարելու նպատակով, և

բ) օրինական առևտուրը դյուրացնելու նպատակով:

3. Սույն Համաձայնագրի շրջանակներում նախատեսվող փոխադարձ

օգնությունը պետք է տրամադրվի Հայցվող մաքսային ծառայության պետության տարածքում գործող օրենսդրության համապատասխան և մաքսային ծառայության իրավասության ու հնարավորությունների սահմաններում:

4. Սույն Համաձայնագիրը չի սահմանափակում Պայմանավորվող կողմերի միջև գործող՝ փոխադարձ իրավական օգնության մասին ցանկացած այնպիսի համաձայնագրի գործողությունը, որը գոյություն է ունեցել սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելուց առաջ կամ կարող է ստորագրվել դրա ուժի մեջ մտնելուց հետո:

5. Սույն Համաձայնագրի դրույթները չեն առաջացնում իրավունք որևէ մասնավոր անձի կողմից ստանալ, թաքցնել կամ բացառել որևէ ապացույց կամ խոչընդոտել օգնություն տրամադրելու հարցման պահանջների կատարումը:

6. Սույն Համաձայնագիրը կիրառելի է Պայմանավորվող կողմերի տարածքներում:

Հոդված 3

Ընդհանուր օգնության շրջանակը

1. Մաքսային ծառայությունները հարցման հիման վրա կամ իրենց նախաձեռնությամբ միմյանց տրամադրում են տեղեկություններ և օպերատիվ տվյալներ, որոնք կօգնեն ապահովել մաքսային օրենսդրության պատշաճ կիրառումը, ինչպես նաև Պայմանավորվող կողմերի միջև ապրանքների և ուղևորների տեղաշարժի հետ կապված մաքսային իրավախախտումների կանխումը, քննությունը, դրանց առնչությամբ իրականացվող քրեական հետապնդումը և դրանց դեմ պայքարը:

2. Հայցող մաքսային ծառայության հարցման հիման վրա Հայցվող մաքսային ծառայությունը տրամադրում է այդ Պայմանավորվող կողմի Հայցվող մաքսային ծառայության պետության տարածքում կիրառելի մաքսային օրենսդրության և ընթացակարգերի վերաբերյալ բոլոր այն տեղեկությունները,

որոնք առնչվում են մաքսային իրավախախտման հետ կապված հարցումներին:

3. Պայմանավորվող կողմերի Մաքսային ծառայությունները հարցման հիման վրա կամ իրենց նախաձեռնությամբ փոխանցում են ցանկացած հասանելի տեղեկություն, որը վերաբերում է.

ա) մաքսային օրենսդրության կիրառման համակարգի նոր տեխնիկաներին, որոնք ապացուցել են իրենց արդյունավետությունը.

բ) մաքսային իրավախախտումներ կատարելու նոր միտումներին, միջոցներին կամ մեթոդներին.

գ) ցանկացած այլ տվյալի, որը կարող է մաքսային ծառայություններին օգնել վերահսկողության և դյուրացման նպատակով իրականացվող ռիսկերի գնահատման հարցում.

դ) կոնկրետ այն անձանց իրենց տարածք մուտք գործելուն և այն լքելուն, որոնք հայտնի է, որ խախտել են Հայցող մաքսային ծառայության կողմից կիրառվող մաքսային օրենսդրությունը կամ կասկածվում են դրա մեջ:

4. Հայցվող մաքսային ծառայությունը հարցման հիման վրա Հայցող մաքսային ծառայությանը տրամադրում է ցանկացած հասանելի տեղեկություն, որը.

ա) պարունակվում է Պայմանավորվող կողմերի միջև ապրանքների տեղաշարժի վերաբերյալ մաքսային այն փաստաթղթերում, որոնց առնչությամբ կա կասկած, որ դրանք հակասում են Հայցող մաքսային ծառայության երկրի մաքսային օրենսդրությանը.

բ) հնարավորություն է տալիս հայտնաբերելու հատկապես մաքսային արժեքի վերաբերյալ կեղծ հայտարարագրերը.

գ) վերաբերում է ծագման հավաստագրերի, հաշիվ-ապրանքագրերի կամ այլ փաստաթղթերի, որոնք հայտնի է, որ կեղծ են, կամ դրանց կեղծ լինելու մասին կա կասկած, և

դ) վերաբերում է ի հաստատումն Հայցող մաքսային ծառայության մարմիններին ներկայացված հայտարարագրի ցանկացած ներկայացված փաստաթղթի իսկությանը.

5. Պայմանավորվող կողմերի մաքսային ծառայությունները համագործակցում են հետևյալի շուրջ.

ա) հաղորդակցման ուղիների ստեղծում և պահպանում՝ խթանելու համար տեղեկությունների անվտանգ և արագ փոխանակումը.

բ) արդյունավետ համակարգման խթանում.

գ) նոր մաքսային ընթացակարգերի ուսումնասիրություն, մշակում և կիրառում.

դ) փոխադարձ հետաքրքրությունը խթանելու նպատակով անձնակազմերի վերապատրաստում և փոխանակում.

ե) նոր սարքավորումների կամ ընթացակարգերի դիտարկում ու փորձարկում, և

զ) փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող ցանկացած այլ հարցի, որի առնչությամբ ժամանակ առ ժամանակ կարող է պահանջվել նրանց կողմից համատեղ գործողության իրականացում:

6. Պայմանավորվող կողմերի մաքսային ծառայությունները հնարավորության սահմաններում համագործակցում և տեղեկություններ են փոխանակում թմրամիջոցների, հոգեմետ նյութերի, քիմիական պրեկուրսորների և այլ արգելված ապրանքների ապօրինի շրջանառության առնչությամբ իրենց կողմից կատարվող հարկադիր գործողությունների վերաբերյալ:

ԳԼՈՒԽ III

Հոդված 4

Մաքսային օրենսդրության կիրառման և կատարման նպատակով տրամադրվող տեղեկությունները

1. Հայցվող մաքսային ծառայությունը մյուս մաքսային ծառայության արած հատուկ հարցման առկայության դեպքում տրամադրում է տեղեկություններ հետևյալի մասին.

ա) արդյո՞ք Հայցող մաքսային ծառայության տարածք ներմուծված ապրանքներն օրինական կարգով են արտահանվել Հայցվող մաքսային ծառայության տարածքից, և

բ) արդյո՞ք Հայցող մաքսային ծառայության տարածքից արտահանված ապրանքներն օրինական կարգով են ներմուծվել Հայցվող մաքսային ծառայության տարածք:

2. Հայցվող մաքսային ծառայությունը ներկայացնում է նաև ապրանքների մաքսազերծման ընթացքում կիրառվող մաքսային ընթացակարգերի վերաբերյալ մանրամասները:

3. Հարցման մեջ պետք է նշվեն ստուգման այն ընթացակարգերը, որոնցով Հայցող մաքսային ծառայությունը ցանկանում է, որ Հայցվող մաքսային ծառայությունն առաջնորդվի, ինչպես նաև պետք է հստակ նկարագրի այն կոնկրետ տեղեկությունները, որոնք հայցվում են:

Հոդված 5

Վերահսկողությունը և տեղեկությունները

1. Հարցման հիման վրա Հայցվող մաքսային ծառայությունն իր պետության տարածքի սահմաններում պետք է հնարավորինս վերահսկողություն իրականացնի,

ինչպես նաև տեղեկություններ տրամադրի հետևյալի վերաբերյալ.

ա) փոխադրվող կամ պահեստավորված այն ապրանքների, որոնք հայտնի է, որ օգտագործվել են Հայցող մաքսային ծառայության պետության տարածքում մաքսային իրավախախտումներ կատարելու համար կամ կասկածվում են այդ նպատակով օգտագործված լինելու մեջ.

բ) այն տրանսպորտային միջոցների, որոնք հայտնի է, որ օգտագործվել են Հայցող մաքսային ծառայության պետության տարածքում մաքսային իրավախախտումներ կատարելու համար կամ կասկածվում են այդ նպատակով օգտագործված լինելու մեջ.

գ) Հայցվող մաքսային ծառայության պետության տարածքում գտնվող այն շինությունների, որոնք հայտնի է, որ օգտագործվել են Հայցող մաքսային ծառայության պետության տարածքում մաքսային իրավախախտումներ կատարելու համար կամ կասկածվում են այդ նպատակով օգտագործված լինելու մեջ, և

դ) այն ֆիզիկական կամ իրավաբանական անձի, որը հայտնի է, որ Հայցող մաքսային ծառայության պետության տարածքում մաքսային իրավախախտումներ է կատարել կամ կասկածվում է դրանց կատարման մեջ:

2. Այդ վերահսկողության արդյունքները պետք է հնարավորինս ողջամիտ սեղմ ժամկետում փոխանցվեն մյուս մաքսային ծառայությանը:

Հոդված 6

Տեղեկությունների և օպերատիվ տվյալների փոխանակում

1. Մաքսային ծառայությունները հարցման հիման վրա կամ իրենց նախաձեռնությամբ միմյանց տրամադրում են տեղեկություններ և օպերատիվ

տվյալներ այնպիսի գործարքների կամ ավարտված կամ պլանավորված գործողությունների վերաբերյալ, որոնք հանդիսանում են կամ կարող են համարվել մաքսային իրավախախտում:

2. Լուրջ դեպքերում, երբ կարող է էական վնաս հասցվել Պայմանավորվող կողմերից որևէ մեկի տնտեսությանը, բնակչության առողջությանը, հանրային անվտանգությանը կամ այլ կենսական շահի, մյուս Պայմանավորվող կողմի մաքսային ծառայությունը հնարավորության դեպքում տեղեկություններ և օպերատիվ տվյալներ է տրամադրում իր նախաձեռնությամբ:

ԳԼՈՒԽ IV

Հոդված 7

Կարողությունների զարգացումը

1. Պայմանավորվող կողմերի մաքսային ծառայությունները միմյանց հետ համագործակցում են մաքսային հարցերով, ներառյալ՝

ա) փոխադարձ շահերից բխելու դեպքում մաքսային ծառայողների կամ փորձագետների փոխանակման՝ մաքսային ոլորտում միմյանց կողմից կիրառվող տեխնիկաների վերաբերյալ տեղեկացվածությունը խթանելու նպատակով.

բ) արգելող և հայտնաբերող սարքավորումների օգտագործման վերաբերյալ տեղեկությունների և փորձի փոխանակման.

գ) մաքսային օրենսդրության և ընթացակարգերի վերաբերյալ մասնագիտական, գիտական և տեխնիկական բնույթի տվյալների փոխանակման.

դ) տեղեկությունների փոխանակման՝ իրենց մաքսային ընթացակարգերի արդիականացման, պարզեցման և ներդաշնակեցման համար:

2. Պայմանավորվող կողմերի մաքսային ծառայությունները վերոնշյալ ոլորտներում իրականացնում են փոխադարձ համագործակցություն, ի թիվս այլնի, հետևյալ մեթոդներով.

ա) ուսուցանող անձնակազմերի, փորձագետների և վերապատրաստվողների փոխանակում՝ մաքսային ծառայությունների որոշած ընթացակարգերին և ժամկետներին համապատասխան, և

բ) միմյանց վերապատրաստման նյութերի փոխանակում և պատշաճ օգտագործում՝ առանց մաքսային ծառայության հեղինակային և հարակից իրավունքների խախտման:

ԳԼՈՒԽ V

Հոդված 8

Առևտրի դյուրացումը

1. Պայմանավորվող կողմերի մաքսային ծառայությունները կձգտեն դյուրացնել առևտուրը և համաձայն են, որ հետևյալ սկզբունքները, մասնավորապես, հիմք են առևտրի դյուրացմանն ուղղված միջոցների մշակման և կառավարման համար.

ա) առևտրային ընթացակարգերի թափանցիկություն, արդյունավետություն, պարզեցում, ներդաշնակեցում և դրանց հետևողական կիրառում.

բ) միջազգային չափանիշների կիրառման խթանում և համապատասխանության ապահովում կիրառելի բազմակողմ փաստաթղթերին.

գ) տեղեկատվական տեխնոլոգիաների և վերահսկողության օգտագործում՝ հիմնված ռիսկերի կառավարման վրա.

դ) յուրաքանչյուր Պայմանավորվող կողմի ներսում մաքսային և սահմանային

այլ մարմինների միջև համագործակցություն, և

ե) պատշաճ խորհրդակցություններ իրենց համապատասխան գործարար շրջանակների հետ:

2. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ պետք է ընդունի կամ վարի պարզեցված մաքսային ընթացակարգեր իրենց հուսալիությունն ապացուցած ներմուծողների կամ նրանց լիազորված գործակալների հայտարարագրած ապրանքների արդյունավետ մաքսազերծման համար:

Հոդված 9

Ռիսկերի կառավարումը

Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ պետք է հնարավորության դեպքում կիրառի ավտոմատացման և ռիսկերի կառավարման համակարգեր ռիսկերի վերլուծության և թիրախավորման համար՝ իր մաքսային մարմիններին հնարավորություն տալով իրենց ստուգման գործողություններն արդյունավետորեն կենտրոնացնել բարձր ռիսկային գործարքների վրա և դյուրացնել օրինական առևտրի հետ կապված մաքսազերծումը և տեղաշարժը:

Հոդված 10

Մաքսային արժեքի որոշումը

Պայմանավորվող կողմերի միջև առևտրի նկատմամբ կիրառվող մաքսային արժեքը որոշելիս պետք է առաջնորդվել «1994 թվականի ՍԱԳՀ VII հոդվածի իրականացման մասին» ԱՀԿ համաձայնագրով:

Հոդված 11

Նախնական որոշումները

Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ ձգտում է ապահովել մաքսային հարցերի վերաբերյալ նախնական որոշումների համակարգ:

ԳԼՈՒԽ VI

Հոդված 12

Օգնություն տրամադրելու վերաբերյալ հարցումները

1. Պայմանավորվող կողմի մաքսային ծառայությունը մյուս մաքսային ծառայության ներկայացրած հատուկ հարցման հիման վրա պետք է տրամադրի մաքսային փաստաթղթեր, փոխադրման վերաբերյալ փաստաթղթեր, ապացույցների մասին արձանագրություններ կամ դրանց վավերացված պատճենները, որոնք տեղեկություններ են պարունակում իրականացված կամ նախատեսված այնպիսի գործողությունների մասին, որոնք համարվում են կամ կարող են համարվել մյուս մաքսային ծառայության տարածքում գործող մաքսային օրենսդրության խախտում:

2. Պայմանավորվող կողմի մաքսային ծառայությունը կարող է պահանջել փաստաթղթերի բնօրինակները միայն այն դեպքում, երբ վավերացված կամ նույնականությունը հաստատված օրինակները բավարար չեն: Նշված փաստաթղթերի բնօրինակները պահանջելու դեպքում դրանք պետք է վերադարձվեն հնարավորինս շուտ և առանց ուշացման: Հայցվող մաքսային ծառայության կամ երրորդ կողմերի՝ դրա հետ կապված իրավունքները չպետք է ունենան որևէ ազդեցություն:

3. Մյուս Պայմանավորվող կողմին տրամադրվող տեղեկությունները կարող են սույն Համաձայնագրում նշված փաստաթղթային եղանակի փոխարեն

փոխանցվել էլեկտրոնային եղանակով: Այն պետք է պարունակի այդ տեղեկությունների մեկնաբանման և օգտագործման համար անհրաժեշտ բացատրություններ:

4. Սույն Համաձայնագրի շրջանակներում փոխանակման ենթակա բոլոր տեղեկություններն և օպերատիվ տվյալները պետք է ուղեկցվեն դրանք մեկնաբանելու կամ օգտագործելու համար անհրաժեշտ բոլոր տեղեկություններով:

Հոդված 13

Հարցումների փոխանցումը

1. Սույն Համաձայնագրով սահմանված՝ օգնություն տրամադրելու վերաբերյալ հարցումները պետք է ուղղակիորեն փոխանցվեն Պայմանավորվող կողմերի մաքսային ծառայություններին: Մաքսային ծառայություններից յուրաքանչյուրն այդ նպատակով նշանակում է Կենտրոնական մարմին (մարմիններ) և դրա (դրանց) վերաբերյալ տվյալները տրամադրում մյուս մաքսային ծառայությանը: Նշանակված Կենտրոնական մարմնի հետ կապված ցանկացած փոփոխության մասին պետք է անհապաղ հաղորդվի:

2. Սույն Համաձայնագրով սահմանված՝ օգնություն տրամադրելու վերաբերյալ հարցումները ներկայացվում են գրավոր, էլեկտրոնային տարբերակով կամ բանավոր՝ կախված նրանից, թե հանգամանքներն ի՛նչ են պահանջում, ինչպես նաև ուղեկցվում են ցանկացած տեղեկատվությամբ, որը կարող է օգտակար համարվել այդ հարցումների պահանջները կատարելու տեսանկյունից: Հայցվող մաքսային ծառայությունը կարող է պահանջել էլեկտրոնային հարցումների գրավոր հաստատում: Բանավոր հարցումներին պարտադիր կերպով հաջորդում է երեսուն (30) աշխատանքային օրվա ընթացքում կատարված գրավոր հաստատումը:

3. Հարցումները ներկայացվում են անգլերեն: Այդ հարցումներն ուղեկցող՝ անգլերեն չկազմված ցանկացած փաստաթուղթ պետք է, ըստ անհրաժեշտության,

թարգմանվի անգլերեն:

4. Սույն հոդվածի 2-րդ կետի համաձայն ներկայացված հարցումները պետք է ներառեն հետևյալ տվյալները.

ա) Հայցող մաքսային ծառայության համապատասխան ստորաբաժանման անվանումը.

բ) հայցվող օգնության բնույթը և հարցման պատճառները.

գ) խնդրո առարկա գործի համառոտ նկարագրությունը և համապատասխան իրավական ու վարչական դրույթները.

դ) այն անձանց անուններն ու հասցեները, որոնց վերաբերում է հարցումը, եթե հայտնի են, և

ե) ցանկացած այլ տեղեկություն, որը կարող է դյուրացնել հարցման պահանջների կատարումը:

5. Եթե Հայցող մաքսային ծառայությունը պահանջում է, որ պահպանվի որոշակի ընթացակարգ և մեթոդաբանություն, ապա կարող են նշվել այդ հատուկ պահանջի պատճառները: Այդ դեպքերում Հայցվող մաքսային ծառայությունը կարող է բավարարել այդ պահանջը՝ համաձայն իր ազգային իրավական, նորմատիվ և վարչական դրույթների:

6. Հայցվող մաքսային ծառայությունը պետք է ձգտի Հայցող մաքսային ծառայության հայցած տեղեկությունները տրամադրել հնարավորինս սեղմ ժամկետում. նախընտրելի է Հայցվող մաքսային ծառայության կողմից այն ստանալու պահից վեց (6) ամսվա ընթացքում:

7. Եթե Հայցվող մաքսային ծառայությունը չի տիրապետում հայցվող տեղեկություններին, նա պետք է, իր ազգային իրավական և վարչական դրույթներին համապատասխան և դրանց շրջանակում, կա՛մ՝

ա) նախաձեռնի հարցումներ՝ այդ տեղեկություններն ստանալու համար,

բ) հարցումն անհապաղ փոխանցի համապատասխան մարմնին, կա՛մ

գ) նշի, թե ո՛ր համապատասխան մարմիններին է այն վերաբերում:

8. Սույն հոդվածի 7-րդ կետով սահմանված ցանկացած հարցում կարող է ներառել համապատասխան վկաների և փորձագետների, ինչպես նաև այն անձանց հայտարարությունների արձանագրությունը, որոնցից մաքսային իրավախախտմանն առնչվող տեղեկություններ են պահանջվում:

9. Չնայած սույն հոդվածի 7-րդ կետով սահմանված ընթացակարգին՝ այն դեպքում, երբ Հայցվող մաքսային ծառայությունը չի կարող Հայցող մաքսային ծառայությանը տրամադրել պահանջվող տեղեկությունները կամ փաստաթղթերը, նա պետք է դրա պատճառների մասին տեղեկացնի Հայցող մաքսային ծառայությանը:

Հոդված 14

Մաքսային ծառայողների գտնվելը մյուս Պայմանավորվող կողմի տարածքում

1. Հարցման հիման վրա Հայցող մաքսային ծառայության կողմից հատուկ նշանակված ծառայողները, Հայցվող մաքսային ծառայության լիազորմամբ և Հայցվող մաքսային ծառայության երկրի օրենսդրության համապատասխան, ինչպես նաև ենթարկվելով այն պայմաններին, որոնք կարող է վերջինս սահմանել, մաքսային իրավախախտումներ քննելու նպատակով կարող են.

ա) Հայցվող մաքսային ծառայության գրասենյակներում ուսումնասիրել այդ մաքսային իրավախախտումներին վերաբերող փաստաթղթերը և ցանկացած այլ տեղեկություն, ինչպես նաև ստանալ դրանց պատճենները.

բ) ներկա լինել Հայցվող մաքսային ծառայության երկրում վերջինիս կողմից մաքսային օրենսդրության համաձայն իրականացվող ցանկացած այնպիսի քննության կամ վարույթի, որը վերաբերում է Հայցող մաքսային

ծառայությանը: Այդ ծառայողները գործում են միայն խորհրդատվական հիմունքներով:

2. Այն դեպքում, երբ Հայցող մաքսային ծառայության աշխատակիցները սույն հոդվածի 1(բ) ենթակետով նախատեսված հանգամանքներում գտնվում են մյուս Մաքսային ծառայության երկրում, նրանք այդ ողջ ընթացքում պետք է կարողանան տրամադրել իրենց պաշտոնապես լիազորված լինելը վկայող ապացույցներ:

3. Սույն Համաձայնագրով սահմանված պայմաններով մյուս մաքսային ծառայության երկրում գտնվելու ընթացքում ծառայողները պատասխանատու են իրենց կողմից կատարվող ցանկացած իրավախախտման համար և տվյալ երկրի ազգային օրենսդրությամբ նախատեսված սահմաններում օգտվում են այն նույն պաշտպանությունից, որը տրամադրվում է սեփական մաքսային ծառայողներին:

Հոդված 15

Տեղեկությունների գաղտնիությունը

1. Թույլատրվում է սույն Համաձայնագրի շրջանակներում ստացված ցանկացած տեղեկության կամ փաստաթղթի օգտագործումը մաքսային օրենսդրության համաձայն իրականացվող վարույթի կամ հարցումների ընթացքում: Այնուամենայնիվ, այդ տեղեկությունները և փաստաթղթերը չպետք է օգտագործվեն այլ նպատակներով՝ սույն Համաձայնագրում նշված նպատակներից բացի, բացառությամբ այն դեպքերի, եթե չի ստացվել մյուս Մաքսային ծառայության գրավոր համաձայնությունը:

2. Սույն Համաձայնագրի համաձայն մաքսային ծառայությունների միջև ցանկացած ձևով տեղեկությունների ցանկացած փոխանակման դեպքում տեղեկություններին և փաստաթղթերին շնորհվում է պաշտպանության միևնույն իրավունքը՝ այն Պայմանավորվող կողմի օրենսդրության համապատասխան, որին

պատկանում է Հայցող մաքսային ծառայությունը:

3. Եթե սույն Համաձայնագրի շրջանակներում փոխանակվում են անձնական տվյալներ, ապա Պայմանավորվող կողմի մաքսային ծառայությունը պետք է ապահովի, որ դրանք օգտագործվեն միայն նշված նպատակներով, ինչպես նաև պետք է ապահովի տվյալների պաշտպանության չափանիշ՝ Պայմանավորվող կողմերի ազգային օրենսդրության համապատասխան:

Հոդված 16

Փորձագետները և վկաները

1. Հարցման հիման վրա Պայմանավորվող կողմի մաքսային ծառայությունը կարող է իր ծառայողներին լիազորել Հայցող մաքսային ծառայության տարածքում իրականացվող վարչական, քվազի-դատական կամ դատական վարույթներում ներկայանալու որպես փորձագետներ կամ վկաներ և տրամադրելու այն հասանելի արձանագրությունները, փաստաթղթերը կամ այլ ապացույցներ կամ նշված փաստաթղթերի վավերացված պատճենները, որոնք վարույթի համար կարող են էական նշանակություն ունենալ:

2. Հայցող մաքսային ծառայության երկրում այդ լիազորված ծառայողների ներկա գտնվելու ընթացքում կիրառվում են 14-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ կետերի դրույթները:

Հոդված 17

Օգնություն տրամադրելու պարտավորությունից բացառությունները

1. Եթե Հայցվող մաքսային ծառայությունը համարում է, որ հարցման պահանջները կատարելը կարող է վնաս հասցնել իր պետության ինքնիշխանությանը, անվտանգությանը կամ որևէ այլ կենսական շահի, նա կարող է

ամբողջությամբ կամ մասամբ մերժել սույն Համաձայնագրով հայցվող օգնության տրամադրումը կամ հայցվող օգնության տրամադրումը պայմանավորել որոշակի ժամկետներով և պայմաններով:

2. Եթե Հայցող մաքսային ծառայությունը չէր կարողանա բավարարել նմանատիպ հարցման պայմանները, եթե այն ներկայացվեր Հայցվող մաքսային ծառայության կողմից, ապա նա պետք է իր հարցման մեջ ուշադրություն հրավիրի այդ փաստի վրա: Այդ դեպքում օգնություն տրամադրելու վերաբերյալ հարցման պահանջների կատարումը կախված է Հայցվող մաքսային ծառայության հայեցողությունից:

3. Եթե օգնության տրամադրումը մերժվում է, դրա պատճառների մասին հնարավորինս սեղմ ժամկետներում գրավոր ծանուցվում է Հայցող մաքսային ծառայությանը:

Հոդված 18

Ֆինանսական գործարքները

1. Յուրաքանչյուր մաքսային ծառայություն մերժում է սույն Համաձայնագրի կատարման ընթացքում կատարված ծախսերը փոխհատուցելու բոլոր պահանջները՝ բացառությամբ Կառավարության աշխատակից չհանդիսացող փորձագետների, վկաների, բանավոր և գրավոր թարգմանիչների առնչությամբ փոխադարձաբար համաձայնեցված ծախսերի, որոնք կրում է Հայցող մաքսային ծառայությունը:

2. Եթե հարցման կատարման համար պահանջվում են կամ պահանջվելու են էական կամ չափից մեծ ծախսեր, ապա ծառայությունները պետք է խորհրդակցեն հարցման պահանջների կատարման ժամկետների ու պայմանների շուրջ, ինչպես նաև այն մասին, թե ինչպես են կրելու ծախսերը:

ԳԼՈՒԽ VII

Հոդված 19

Մաքսային հարցերով համագործակցության համատեղ կոմիտեն

1. Ստեղծվում է մաքսային հարցերով համագործակցության համատեղ կոմիտե, որը բաղկացած է յուրաքանչյուր Պայմանավորվող կողմի մաքսային ծառայություններից և վերջիններիս կողմից նշանակվող՝ հավասար թվով ծառայողներից: Այն իր ժողովները պետք է գումարի այն վայրում, այնպիսի ժամանակ և այնպիսի օրակարգով, որոնց շուրջ նախապես փոխադարձ համաձայնություն է ձեռք բերվում մաքսային ծառայությունների միջոցով:

2. Մաքսային հարցերով համագործակցության համատեղ կոմիտեն, ի թիվս այլնի՝

ա) վերահսկում է Համաձայնագրի պատշաճ գործողությունը.

բ) քննում է դրա կիրառումից բխող բոլոր հարցերը.

գ) ձեռնարկում է մաքսային հարցերով համագործակցության համար անհրաժեշտ միջոցներ՝ սույն Համաձայնագրի նպատակներին համապատասխան.

դ) փոխանակում է տեսակետներ մաքսային հարցերով համագործակցությանը վերաբերող ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող ցանկացած հարցի վերաբերյալ, ներառյալ հետագա միջոցները և դրանց համար անհրաժեշտ ռեսուրսները.

ե) առաջարկում է սույն Համաձայնագրի նպատակներին հասնելուն ուղղված լուծումներ:

3. Մաքսային հարցերով համագործակցության համատեղ կոմիտեն ընդունում է իր ներքին կանոնակարգը:

Հոդված 20

Վեճերի կարգավորումը

1. Սույն Համաձայնագրի մեկնաբանության և կիրառման հետ կապված ցանկացած վեճ կարգավորվում է Պայմանավորվող կողմերի բանակցությունների միջոցով:

2. Չկարգավորված վեճերը կամ բարդ հարցերը կկարգավորվեն դիվանագիտական միջոցներով:

Հոդված 21

Փոփոխությունները և լրացումները

Սույն Համաձայնագրում փոփոխություններ կամ լրացումներ կատարվում են Պայմանավորվող կողմերի փոխադարձ համաձայնությամբ: Այդ փոփոխություններն ու լրացումները կատարվում են առանձին արձանագրություններով, որոնք կազմում են սույն Համաձայնագրի անբաժանելի մասը և ուժի մեջ են մտնում համաձայն 22-րդ հոդվածի դրույթների:

Հոդված 22

Համաձայնագրի ուժի մեջ մտնելը և դրա գործողության դադարեցումը

1. Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ազգային իրավական ընթացակարգերը կատարելու մասին Պայմանավորվող կողմերի՝ դիվանագիտական ուղիներով միմյանց գրավոր ծանուցելուց հետո՝ երկրորդ ամսվա առաջին օրը:

2. Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մնում անորոշ ժամկետով, եթե Պայմանավորվող կողմերից որևէ մեկը երեք ամիս առաջ գրավոր չի ծանուցում Համաձայնագիրը դադարեցնելու իր մտադրության մասին: Դադարեցումը

գործողության մեջ է մտնում նշված ծանուցումն ստանալու օրվանից երեք ամիս հետո:

3. Բացի այդ, մաքսային ծառայություններն իրավունք ունեն, ազգային անվտանգության, ազգային շահի, հասարակական կարգի կամ բնակչության առողջության նկատառումներից ելնելով, ժամանակավորապես, ամբողջությամբ կամ մասամբ կասեցնելու սույն Համաձայնագրի կատարումը: Այդ ժամանակավոր կասեցումը գործողության մեջ է մտնում դիվանագիտական ուղիներով մյուս մաքսային ծառայությանն այդ մտադրության մասին տեղեկացնելու օրվանից մեկ ամիս հետո:

4. Սույն Համաձայնագրի գործողության դադարեցումը կամ ժամանակավոր կասեցումը չի ազդում այն ընթացիկ ծրագրերի իրականացման վրա, որոնց շուրջ համաձայնություն է ձեռք բերվել մինչև այդ դադարեցման կամ ժամանակավոր կասեցման օրը: Մաքսային ծառայություններն ընդունում են, որ սույն Համաձայնագրի՝ ստացված կամ տրամադրված տեղեկությունների գաղտնիությանը, օգտագործմանը և բացահայտմանը վերաբերող դրույթները կշարունակեն գործել անորոշ ժամկետով՝ անկախ սույն Համաձայնագրի գործողության դադարեցումից:

Ի ՀԱՍՏԱՏՈՒՄՆ ՈՐԻ՝ ներքոստորագրյալները, պատշաճ կերպով լիազորված լինելով իրենց համապատասխան կառավարությունների կողմից, ստորագրեցին սույն Համաձայնագիրը:

ԿԱՏԱՐՎԱԾ Է ..... քաղաքում, 2023 թվականի ....-ին, երկու բնօրինակով. յուրաքանչյուրը հայերեն, հինդի և անգլերեն, ընդ որում՝ բոլոր տեքստերը հավասարազոր են: Սույն Համաձայնագրի դրույթների մեկնաբանման հետ կապված որևէ տարաձայնության դեպքում գերակայում է անգլերեն տեքստը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ՝	**ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ՝**